ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԻ

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Մախմուրյան Գայանե Գեորգիի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Սաֆրաստյան Ռուբեն Արամի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ազատյան Արա Կամոյի

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 24-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության ուսումնասիրությունն ունի գիտաքաղաքական կարևորություն: Թեպետ հրապարակի վրա կան բազմաթիվ ուսումնասիրություններ, այդուհանդերձ առ այսօր շատ հարցեր վիճահարույց են և վերագնահատման կարիք ունեն, ինչպես օրինակ, պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական մի շարք իրադարձությունների, պատերազմի սկսման ստույգ օրվա, հայկական բանակի հարկադրական նահանջի, պարտության պատճառների և այլն:

Այսօր անհրաժեշտություն կա ոչ միայն լուսաբանել խնդրի չուսումնասիրված մի շարք ասպեկտներ, այլև իրական գնահատական տալ բազմաթիվ մոտեցումներին, առավել ևս, որ շատ ուսումնասիրողներ թեմային անդրադարձել են կուսակցական դիրքերից: Մյուս կողմից կարևորվում է անաչառ քննական մոտեցումը խորհրդահայ պատմաբանների տեսակետների նկատմամբ, ինչը պայմանավորված է խորհրդային պետության որդեգրած գաղափարախոսական և քաղաքական պարտադրանքով:

Թեմայի նորովի վերիմաստավորումն առաջնային է դառնում հատկապես ՀՀ ներկա ռազմաքաղաքական իրավիճակի տեսանկյունից, երբ Անկարայի իշխանությունների հակահայ քայլերի և ադրբեջանական ակնհայտ ագրեսիայի պայմաններում առավել հրատապ է դառնում թուրք-ադրբեջանական կեղծարարությանը պատշաճ գիտական և քաղաքական հակահարված տալու անհրաժեշտությունը:

Ներկայումս խորհրդային պատմագրության ժառանգությունից ձերբազատված հայ պատմագիտական միտքը շարունակում է վերանայել պատմական իրականության խեղաթյուրումներն ու կեղծիքները՝ վերականգնելով 1918-1920 թթ. իրադարձությունների իրական հանգամանքները՝ կատարելով պատմահամեմատական վերլուծություններ հատկապես ներկայիս իրադարձությունների հետնախորքի պատկերի վրա:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է պատմական ճշմարտությունը բացահայտելու, անցյալի որոշ իրողությունների պատճառահետևանքային կապերը վերհանելու և իրադարձությունների համակողմանիորեն ներկայացնելու անհրաժեշտությամբ: Եվ վերջապես առաջին անգամ փորձ է արվում համակարգված վերհանել սփյուռքահայ պատմագիտության դիրքորոշումը հարցի նկատմամբ, ինչը հիմնականում դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է լուսաբանել 1920 թ. թուրք-հայկական պատերազմը ժամանակակիցների, խորհրդահայ և սփյուռքահայ պատմագիտական մտքի գնահատմամբ: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական խնդիրները.

- Ներկայացնել ժամանակի, խորհրդային և սփյուռքահայ պատմագիտության մեջ պատերազմին նախորդող ժամանակաշրջանի կարևոր ռազմաքաղաքական իրադարձությունների պատկերը և դրանց հետևանքները, որոնք պատճառ դարձան պատերազմի սանձազերծման:
- Ժամանակակիցների, խորհրդային ու սփյուռքյան հայ պատմագիտության մեջ պատերազմի ընթացքի և ռազմական գործողությունների պատկերը:
- Պատերազմի ավարտական փուլի լուսաբանումը հայ պատմագիտության մեջ:
- Ցույց տալ, որ խորհրդային պատմագիտությունը գաղափարական տարաբնույթ

ելևէջումներ ունեցավ: Ըստ այդմ այն պայմանականորեն բաժանել ենք փուլերի՝ 1920-1940-ական թթ., 1950-1960 ական թթ., 1970-1980 ական թթ.: Խնդիր է դրվել ներկայացնել խորհրդահայ պատմաբաների մոտեցումների տարբերությունն ըստ նշված ժամանակահատվածների: Նշվել է, որ ավելի ուշ՝ 1970-1980-ական թվականներին հեղինակներն այդքան ճնշված չէին գաղափարական կաղապարներով: Հետևաբար նրանց աշխատություններն անհամեմատ ավելի առանաչառորեն են լուսաբանում հիմնահարցը:

- Ընդգծել, որ խորհրդային հեղինակների մի մասը, ապրելով ու ստեղծագործելով նաև հետխորհրդային ժամանակաշրջանում, նշված հարցերի վերաբերյալ հիմնականում վերանայել է իր մոտեցումները: Հեղինակներից շատերը, ձերբազատվելով գաղափարախոսական հարկադրանքից, փոխել են իրենց նախկին դիրքորոշումը՝ հանդես գալով նոր հոդվածներով, հրապարակումներով ու մենագրություններով:

Ժամանակագրական ընդգրկումը: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1918-1920 թթ.: Հետազոտության ընթացքում, ըստ անհրաժեշտության, լուսաբանվել են նաև պատերազմին նախորդող և հետպատերազմյան շրջանի ռազմաքաղաքական իրադարձությունները: Հետազոտության ընթացքում հարցի վերաբերյալ հետխորհրդային և արդի պատմագիտության լուսաբանմանն անդրադարձ չի եղել, քանի որ այդ ուղղությամբ ուսումնասիրությունները բազմաքանակ են և ըստ էության հանդիսանում են առանձին ուսումնասիրության առարկա[1]:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Փորձ է արվում նորովի ներկայացնել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմության գնահատականը՝ ժամանակակիցների, խորհրդահայ և սփյուռքահայ պատմագիտության տեսանկյունից: Այս սկզբունքներից ելնելով, մեր առջև դրել ենք հետևյալ նպատակները: Արխիվային նորահայտ փաստաթղթերի, հրատարակված վավերագրերի, հուշագրությունների, գրականության և մամուլի հրապարակումների ուսումնասիրությամբ համապարփակ ներկայացնել թուրք-հայկական պատերազմի պատմության պատմագրությունը: Ներկայացնել թեմայի վերաբերյալ մի շարք վիճելի հարցերի պատճառներն ու հետևանքները: Անդրադարձ է կատարվել առանցքային նշանակության մի շարք հարցերի, որոնք պատմաբանների կողմից շրջանցվել կամ անուշադրության են մատնվել, ինչը հնարավորություն չէր տալիս ամբողջական և իրական պատկերացում կազմելու 1918-1920 թթ. իրադարձությունների մասին: Մասնավորապես քննության են առնվել բոլշևիկների հակազգային քաղաքականությունը, խորհրդաթուրքական համաձայնության և փոխգործակցության, հայ-վրացական և հայ-ադրբեջանական հարաբերությունների, Խորհրդային Ռուսաստանի՝ ՀՀ-ի և եվրոպական պետությունների միջև ընթացող բանակցությունների նկատմամբ բացասական դիրքորոշման և այլ հարցեր: Մատնանշվել են հարցի վերաբերյալ կուսակցական և քաղաքական գործիչների միակողմանի ու կանխակալ մոտեցումները: Անդրադարձ է կատարվել պատերազմին նախորդած ռազմական իրադարձությունների, մասնավորապես՝ Արցախում Ադրբեջանի ծավալած ռազմական գործողությունների լուսաբանմանը, ինչը ներկայացվել է որպես պատերազմին նախորդած փուլ: Արժևորվել է

[1] Նախատեսված է հետխորհրդային և արդի պատմագիտության լուսաբանմանն անդրադարձ կատարել հետագայում՝ որպես ներկա ատենախոսության տրամաբանական շարունակություն:

սփյուռքահայ պատմագրության մոտեցումների ներկայացման ու վերլուծության անհրաժեշտությունը:

Ատենախոսությունը կամ նրա առանձին դրույթներ կարող են օգտակար նյութ հանդիսանալ ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետների կրթական ծրագրերի համար, մասնավորապես հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանների իրադարձությունների ուսումնասիրման տեսանկյունից: Դրանք կարող են օգտակար լինել թեմային առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ հետազոտություն կատարողների և 20-րդ դարի առաջին քառորդի հայոց պատմության հարցերով զբաղվողների համար:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ֆոնդերում պահվող համապատասխան փաստաթղթերն ու նյութերը: Հատկապես կարևոր են ֆ. 200-ում (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ֆ. 275-ում (ՀՀ դիվանագիտության ներկայացուցչություն), ֆ. 113-ում (ՀՀ կառավարություն), ֆ. 403-ում (Աշոտ Գրաշու (Աշոտ Գրիգորյան) ֆոնդ), ֆ. 1021-ում (ՀԿԿ ԿԿ-ի կուսակցության պատմության ինստիտուտի ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՄԼԻ-ի (Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ) հայկական մասնաճյուղ), ֆ. 1022-ում (ՀԿ(բ)Կ կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտ (կուսպատ) պահվող արխիվային փաստաթղթերը:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ հայ պատմագիտության մեջ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել: Կարևոր և ուշագրավ են թեման շոշափող ժամանակակիցների քաղաքական ու հասարակական գործիչների աշխատությունները[2], որոնցում ականատեսի աչքերով է ներկայացվում դեպքերի ու իրադարձությունների ընթացքը: Վերջիններիս կողմից գրի առնված աշխատությունների ու հոդվածների խումբն էլ հիմնականում կազմել է հարցի առնչությամբ մինչխորհրդային հայ պատմագիտության շրջանն ուսումնասիրելու հենքը: Լինելով թուրք-հայկական պատերազմի առաջին նկարագրողներն ու ուսումնասիրողները, որոշակիորեն սահմանափակված լինելով պատմահամեմատական վերլուծություն կատարելու հնարավորությունից, նրանք շատ հարցերում ցուցաբերել են կուսակցականություն, սուբյեկտիվիզմ կամ ուղղակի խուսափել են հստակ պատասխաններից: Ալեքսանդր Խատիսյանը գրում է. «Այս խնդրի շուրջը ստեղծուած են շատ առասպելներ եւ շատ բան է գրուած, բայց վերջին խօսքը դեռ չէ ըսուած, որովհետեւ այդ շրջանի վերաբերեալ դիւանագիտական պատմութիւնը չէ հրատարակուած ո՛չ Թուրքերու եւ ո՛չ ալ Ռուսերու կողմէ: Երբոր հրատարակուի, մենք կիմանանք, անշուշտ, շատ դառն ճշմարտութիւններ եւ ցնդած կը տեսնենք շատ հեքիաթներ բոլշևիկներու «փրկարար» դերի մասին»[3]:

Առաջնային հարթակի վրա են հատկապես 1918-1920 թթ. կառավարություն կազմած, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների՝ վարչապետներ Հ. Քաջազնունու[4], Ալ. Խատիսյանի[5], Ս. Վրացյանի[6] աշխատությունները:

---

[2] Նրանց մեծ մասը, դառնալով վտարանդի, ստեղծագործել են արտերկրում, բայց մեր կողմից դիտարկվել են որպես ժամանակի հեղինակներ:

[3] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 252:

[4] Քաջազնունի Հ., Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1923:

[5] Խատիսեան Ալ., նշվ. աշխ.:

Կարևոր են նաև ՀՀ արտաքին ու ներքին գերատեսչություններում 1918-1920 թթ. ընթացքում պաշտոններ զբաղեցրած գործիչների՝ Հ. Տէր-Հակոբյանի[7], Ա. Ջամալյանի[8], Ռ. Տեր Մինասյանի[9], Կարո Սասունու[10], Ա. Ահարոնյանի[11] և այլոց աշխատությունները: Նշված հեղինակները, որպես կանոն, կուսակցական հստակ դիրքերից անդրադարձել են Հայաստանի Հանրապետության տնտեսական, քաղաքական ու ռազմական իրավիճակին, հայ-վրացական, հայ-ադրբեջանական, հայ-ռուսական հարաբերություններին, Հայաստանի Հանրապետության նկատմամբ արևմտյան տերությունների դիվանագիտական մոտեցումներին, պատերազմի սկզբնավորման և այլ հիմնախնդիրների:

Նշված հեղինակները արժեքավոր նյութեր են հրապարակել նաև ժամանակի ՀՅ դաշնակցության մամուլի գլխավոր խոսափող հանդիսացող «Հայրենիք» ամսագրում, որոնց մի մասը, լինելով ծավալուն և շարունակական բնույթ կրելով՝ հետագայում հրատարակվել են գրքերի տեսքով[12]:

1920 թ. պատերազմին նախորդող ռազմաքաղաքական փուլի, ընթացքի ու հատկապես ավարտական փուլի վերաբերյալ անգնահատելի սկզբնաղբյուրային տեղեկություններ է հաղորդում ժամանակի նշանավոր հոգևոր գործիչ Գարեգին արք. Հովսեփյանը, որը 1920 թ. հոկտեմբերի 30-ին ականատես է եղել Կարսի գրավմանը: Վերջինիս հուշագրություններն ամփոփված են «Ոգուն չապաւինելու արդիւնքը» գրքում[13]՝ Գ. Եազըճեանի նախաբանով:

---

[6] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, նույնի՝ Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պեյրութ, 1953:

[7] Տէր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921:

[8] Ջամալյան Հ., Քաջազունին և Հ. Յ. Դաշնակցությունը, Երևան, 2016:

[9] Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները, հ. 7, Երևան, 1991:

[10] Սասունի Կ., Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբութեան շրջանները (Հայաստանը 1920 թվականին), Պէյրութ, 1968, նույնի՝ Հայ-թրքական պատերազմը (1920-ին), Պէյրութ, 1969:

[11] Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001:

[12] Քաջազունի Յ., Ազգ եւ Հայրենիք («Հայրենիք», 1923, թիւ 7, 8-10), Նավասարդեան Վ., Ընկերվարութիւնը եւ Ազգերի Անկախութեան Գաղափարը («Հայրենիք», 1923, թիւ 10, էջ -62-68), Խատիսեան Ալ., նշվ. աշխ. (տե՛ս «Հայրենիք», 1923, թիւ 3, 1924, թիւ 4, 6, 10 և այլն), Վարանդեան Մ., Միջազգային Ընկերվարական Համագումարը («Հայրենիք», 1923, օգոստոս, թիւ 10, էջ 97-106), Ջամալեան Ա., Յ. Քաջազունին եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, «Հայրենիք», Պոսթըն 1924, թիւ 3-5, Կարո Սասունի, Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք», (Բոստոն, 1926), նույնի՝ Ռուսական Օրիենտացիան («Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 6), Վրացեան Ս., Պատմական հարիւրամեակը («Հայրենիք», 1928, նոյեմբեր, թիւ 1, էջ 53-60, նույնի՝ Հարիւր Տարի Վերջը, «Հայրենիք», 1928, թիւ 2, դեկտեմբեր, էջ 140-157), Ահարոնեան Ա., Քեմալական Թուրքիա («Հայրենիք», 1928, փետրվար, թիւ 4), Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը «Հայրենիք», 1928, նոյեմբեր, թիվ 1, Մասուրէան Ս., Վրացի Մենշեւիկները և Անգլիական Զօրավարները, «Հայրենիք», 1928, յունուար, թիւ 3, փետրուար, թիւ 4, Տէրտէրեան Հ., Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լեւոն Շանթի պատվիրակութիւնը, «Հայրենիք», 1954, թիւ 5, մայիս:

[13] Ոգուն չապաւինելու արդիւնքը (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին Գարեգին Արք. Յովսէփեանցի յուշագրութիւնը եւ փաստաթղթեր): կազմեց՝ Գ. Եազըճեան, Երևան, 2002:

Կարևորել ենք նաև ժամանակի հուշագիրներ Ա. Կիսիբեկյանի[14], Ա. Ալեքսանդրյանի[15] հուշերը, որոնք կենսագրական բնույթ կրելով և պարունակելով որոշակի սուբյեկտիվ բնույթ, այնուամենայնիվ, արժանահավատ տեղեկություններ են հաղորդում ժամանակաշրջանի մի շարք կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

Թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ ծանրակշիռ խոսք է ասել սփյուռքահայ ճանաչված պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը: Իր «Հայաստանի Հանրապետություն» աշխատության մեջ նա հանգամանալից անդրադառնում է պատերազմի իրադարձություններին՝ տալով հիմնավոր գնահատականներ՝ արժեքավոր փաստաթղթերի վկայակոչմամբ[16]:

Թուրք-հայկական պատերազմի ընդարձակ շարադրմամբ աչքի է ընկնում և ուշադրության արժանի մեկնաբանություններ է պարունակում Վահե Արծրունու մեծարժեք աշխատությունը[17]:

Գ. Լազյանը գրում է. «Տարիներու պրպտումներէ ետք կուգանք հաստատելու, որ Հայ Դատի պատմութիւնը դեռ կը մնայ անծանոթ իր շատ մը երեսներով: Ազատ եւ Անկախ հայ պետութիւնը միայն օր մը պիտի կարողանայ զայն տալ լրիւ կերպով»[18]: Նա, մերկացնելով հայ-ռուսական մոսկովյան բանակցություններում բոլշևիկյան կողմի հակահայկական դիրքորոշումը, գրում է, որ նրանց նպատակն էր Թուրքիայի խորհրդայնացումը: Իսկ թուրքերի նպատակն էր, որ հայերը հրաժարվեին դաշնակիցների օժանդակությունից և Սևրի դաշնագրից[19]:

Սփյուռքահայ պատմաբաններից թուրք-հայկական պատերազմի իրադարձություններին անդրադարձել են Շ. Նաթալին[20], Ա. Եափուճեանը[21], Ռ. Փիրումյանը[22], Զ. Մսըրլյանը[23], Յու. Փիրումյանը[24]: Անդրադարձել ենք նաև արտերկրում ծնված, հետագայում Հայաստան տեղափոխված Գ. Յազըճյանի[25] եզրահանգումներին:

Ինչպես նշեցինք, ելնելով պատմական դեպքերի զարգացման ընթացքից, խորհրդահայ պատմագիտական միտքը շրջադարձային փուլերում, որոշակի ժամանակաշրջանում փոխեց իր գիտական մոտեցումները մի շարք հարցերի, այդ թվում՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ: Նշված պատմաբաններից են Է.

---

[14] Կիսիբեկյան Ա., Հուշեր, Երևան, 2011:

[15] Ալեքսանդրյան Ա., Կարս. 1920-21, Երևան, 1986:

[16] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, 2016:

[17] Վահէ Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայութիւնը, Շատախ, Երեւան, 2002:

[18] Լազեան Գ., Հայաստանը եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, Երկու խոսք, առանց էջակալման:

[19] Լազեան Գ., Հայաստանը եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 233:

[20] Շահան Նաթալի, Թիւրքիզմը Անգորայէն Պաքու եւ թրքական օրիէնթասիոն, Երևան, 1992:

[21] Եափուճեան Ա., Արեւմտահայաստանի կորուստը և անոր պատասխանատուները, Գահիրե, 1970:

[22] Փիրումյան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ. – բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921 թթ.), Երեւան, 1997:

[23] Մսըրլեան Զ., Երեք դաշնագիրեր, Պէյրութ, 1979:

[24] Пирумян Ю., На обрывках лет и дней: Жизнь Даниэл-бека Пирумяна, Москва, 2013:

[25] Յազըճյան Գ., Հայ-քրդական հարաբերությունները Կարսում 1919-1920 թվականներին, Մերձավոր Արևելք, հոդվածների ժողովածու, Երևան, 2002, էջ 158-169, նույնի՝ Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Երեւան, 2007:

Զոհրաբյանը[26], Լ. Խուրշուդյանը[27] և այլք: Ըստ անհրաժեշտության որոշ անդրադարձ է կատարվել նաև հետխորհրդային ժամանակաշրջանն ընդգրկող նրանց ուսումնասիրություններին, որոնք գրված են ավելի անաչառ ու ճշմարտացի դիրքերից:

Խորհրդային դիրքորոշման մեջ կենտրոնական դիրք է զբաղեցնում դաշնակցական կուսակցության, ՀՀ կառավարության, Արևմուտքի տերությունների արտաքին քաղաքականության հանդեպ անզիջում վերաբերմունքն ու անվերապահ քննադատությունը: Խորհրդահայ պատմաբանները հանդես են գալիս Հայաստանը թուրքական նվաճողներից պաշտպանելու ու փրկելու՝ Խորհրդային Ռուսաստանի դերի գերագնահատման, Ռուսաստանի արտաքին քաղաքականության անվերապահ արդարացման դիրքերից: Նմանօրինակ աշխատանքներ են Ս. Ալիխանյանի[28], Ա. Երզնկյանի[29], Ս. Կարապետյանի[30], Ե. Սարգսյանի[31], Ա. Մնացականյանի[32] գրքերն ու հոդվածները:

Հ. Սիմոնյանն իր աշխատություններում համակողմանիորեն ներկայացրել է 1918-1920 թթ. թուրքական նվաճողական քաղաքականությունը՝ նշելով քեմալական շարժման հետադիմական բնույթն ու հակահայկական տրամադրվածությունը, ինչպես նաև պանթուրքիզմի գաղափարախոսության վտանգավորությունը[33]:

Կարևոր են նաև վերջին տասնամյակներին հրապարակված հուշագրություններն[34] ու փաստաթղթերի և նյութերի ժողովածուները[35]:

---

[26] Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979:

[27] Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977:

[28] Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, Ալիխանյան Ս., Գ. Կ. Օրջոնիկիձեն և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974:

[29] Երզնկյան Ա., Աշխատավորության դատաստանին, Թիֆլիս, 1927:

[30] Կարապետյան Ս., 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965:

[31] Սարգսյան Ե., Անգլո-ամերիկյան ինտերվենցիան Անդրկովկասում, 1918-1920 թթ. և Անդրկովկասի ժողովուրդների պայքարը իրենց ազատության համար, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1953, N 3, էջ 35-48, նույնի՝ Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը, «ԲՀԱ», 1970, թիվ 1, էջ 27-36:

[32] Մնացականյան Ա., Ամերիկյան իմպերիալիզմի 1917-1920 թթ. սովետական իշխանության դեմ կազմակերպած ագրեսիայի ձախողումը, «Տեղեկագիր», N 12, Երևան, 1951, նույնի՝ Ամերիկյան ագրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից, Երևան, 1953, նույնի՝ Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917-1921), Երևան, 1961:

[33] Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

[34] Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը /աշխատասիրութեամբ Վլ. Յարութիւնեանի, Եր., 2018, Ա-Դո, Հայության երկունքը, խմբ.՝ Վ. Ղազախեցյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Հ. Սուքիասյան, Երևան, 2019, Туманян М., Дипломатическая история Республики Армении 1918-1920 гг., Ереван, 2012 և այլն:

[35] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գալոյան Գ., Ղազախեցյան Վլ., Մելիքյան Վ., Միրզոյան Ս., Ամատունի Վ., Երևան, 2000, Нагорный Карабах в международном праве и мировой политике, документы и

Հետազոտության իրականացման համար առաջնային նշանակություն ունի մամուլը, որից առանձնացրել ենք «Հայրենիք», «Մշակ», «Դրօշակ», «Յառաջ», «Յորձանք», «Գործաւոր», «Առաւօտ», «Ժամանակ», «Ճակատամարտ», «Կոմունիստ», «Նորաշխատավոր» պարբերականները: Մամուլի հարուստ նյութերին անդրադառնալիս առաջնորդվել ենք ընտրողաբար. նախապատվություն է տրվել այն նյութերի հեղինակներին, որոնք առավել մոտ են եղել կանգնած ժամանակի իրադարձություններին կամ հանդիսացել են կառավարման համակարգի ներկայացուցիչներ:

Թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ տարբեր հարցերի նորովի հետազոտումը կարող է նպաստ բերել ժամանակակից պատերազմների ու քաղաքական իրավիճակների պայմաններում կողմնորոշման ու դրանց լիարժեք գնահատականի հարցում, ինչպես նաև օգտակար լինել XX դարասկզբի պատմության ուսումնասիրմամբ հետաքրքրվողների համար: Ներկա ատենախոսության նյութը ասպարեզ է բացում պատմագիտական վերլուծության ու գնահատականների համար:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսության համար առաջնային հիմք է ծառայել ժամանակի ականատես-հեղինակների հուշագրությունների, խորհրդային և սփյուռքի պատմաբանների աշխատությունների, ժամանակի մամուլի, արխիվային նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությունը:

Առաջնորդվելով օբյեկտիվության ու համակարգվածության սկզբունքով՝ փորձ է արվել առկա ուսումնասիրությունների ու նյութերի վերլուծությամբ ներկայացնել հայ պատմագիտության կողմից պատերազմի վերաբերյալ մոտեցումներն ու գնահատականները: Պատմաքննական պատմահամեմատական և գիտական անաչառության մեթոդաբանության ներդրմամբ վեր է հանվել նշված իրադարձությունների վերաբերյալ հայ ուսումնասիրողների վերլուծությունը, բացահայտվել են նրանց՝ հաճախ միմյանց հակասող մոտեցումները:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները փորձաքննություն են անցել ՀՀ-ում կազմակերպված միջազգային և հանրապետական գիտական նստաշրջաններում, հրապարակվել են գիտական հանդեսներում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են երեք ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ ամփոփ ներկայացված են ատենախոսության ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է՝ **«Հայ պատմագիտության գնահատականը 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեին ծավալված**

комментарих, под редакции Ю. Барсегова, Москва, 2008; Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и коментарий/ ред. и сост. профессор Ю.Г. Барсегов. http://old.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0648-0685.htm#659 և այլն:

իրադարձությունների վերաբերյալ» և կազմված է երեք ենթագլխից: Այս գլխում ներկայացվում է 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեի իրադարձությունների լուսաբանումը տարածաշրջանում ժամանակի, սփյուռքահայ և խորհրդահայ պատմագիտության մեջ: Գլուխն ընդգրկում է հիմնականում խնդրո առարկա հարցի վերաբերյալ ժամանակակիցների, սփյուռքահայ և խորհրդահայ քաղաքական ու հասարակական գործիչների աշխատությունները և ժամանակի հայկական մամուլում տպագրված հոդվածները: Առաջին հերթին հարթակի վրա են 1920 թ. քաղաքական կյանքում էական դերակատարություն ունեցած Հայաստանի Հանրապետության իշխող քաղաքական ուժի՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների աշխատություններն ու հուշագրությունները: Դրանց հեղինակներն անմիջապես մասնակցել են տվյալ իրադարձություններին, եղել են դեպքերի ականատեսներ:

Մասնավորապես անդրադարձ է կատարված Հայաստանի Հանրապետության նոր ձևավորված և դեռևս լիակատար չամրապնդված կառավարման համակարգի թերություններին, հարևան երկրների հետ փոխհարաբերություններին, արևմտյան տերությունների դիվանագիտական մոտեցումներին, հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերություններին, հանրապետությունում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակին և այլ հիմնախնդիրների:

Երկրորդ գլուխն ունի **«Հայ պատմագիտական միտքը 1920 թ.թուրք-հայկական պատերազմի սկզբնավորման և պատերազմական իրադարձությունների մասին»** խորագիրը և ևս կազմված է երեք ենթագլխից: Սույն գլխում ներկայացված է 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկզբնավորման և պատերազմական իրադարձությունների ընթացքը՝ ըստ ժամանակակիցների հուշագրությունների, ինչպես և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտական մտքի գնահատմամբ:

Ներկայացվել են պատերազմի սկզբնավորման հարցի հետ կապված մոտեցումներն ու քննարկումները[36]: Լուսաբանվել է պատերազմական գործողությունների ընթացքը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Կարսի անկման գնահատականին՝ որպես պատերազմի ելքի համար վճռորոշ, շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձության:

Երրորդ գլուխը՝ **«1920 թ.թուրք-հայկական պատերազմի ավարտական փուլը հայ պատմագիտության գնահատմամբ»,** իր հերթին բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ ներկայացված են 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ավարտական փուլի գնահատականները: Տրված է պատմագիտական մտքի վերլուծությունը պատերազմի ավարտական փուլի, հատկապես Ալեքսանդրապոլի պայմանագրի վերաբերյալ:

Եզրակացություններ: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի իրողությունը ոչ միայն Հայաստանի առաջին հանրապետության, այլև ամբողջ հայ ժողովրդի պատմության կարևորագույն և ճակատագրական դրվագներից է: Այդ պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն կրեց մարդկային, նյութական և բարոյական ահռելի վնաս, այլև կորցրեց տարածքի գրեթե կեսը. Կարսի մարզը, Սուրմալուի շրջանը, Շարուր-Նախիջևանը, փաստացի զրկվեց անկախությունից:

---

[36] Махмурян Г., Политика Великобритании в Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека. Ереван, 2002, с. 226.

1920 թ. թուրք-հայկական պատերազմի հարցերի վերաբերյալ հայ պատմագրության մեջ մնայուն խոսք են ասել ժամանակի, խորհրդային ու սփյուռքի հայ պատմաբանները, հուշագիրները, պետական ու հասարակական գործիչները: Հեղինակները ոչ միայն նկարագրել են պատերազմական իրադարձությունները, այլև վերլուծել, քննարկել, մեկնաբանել, եզրահանգումներ արել դրանց վերաբերյալ, փորձել ժամանակի հեռվից կամ ոչ վաղ անցյալից ընդգծել սխալներն ու բացթողումները:

Ժամանակի պատմագիտությունը բաղկացած է հիմնականում հուշագրերից ու մամուլի նյութերից: Դրանց հեղինակների մեծ մասը վտարանդիներ են, որոնք երբեմն պատմագիտության մեջ դիտարկվում են որպես սփյուռքի հեղինակներ:

Խորհրդային պատմագիտությունը, որն աչքի է ընկնում գաղափախոսական բնույթով մի կողմից հանդես է գալիս կոմունիստական քաղաքականության փառաբանմամբ, մյուս կողմից՝ որոշակի գիտապատմական դիրքորոշում է արտահայտում:

Բոլոր երեք խմբերի հեղինակներն էլ տարբեր քաղաքական, կուսակցական, պատմագիտական դիրքերից են անդրադարձել հարցին: Իրարամերժ գնահատականներ են տրվել, օրինակ՝ Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշմանը, ՀՀ Դաշնակցական կառավարության վարած քաղաքականությանը, ՀՀ բանակի վիճակին, Արևելյան ռազմաճակատում մղված կռիվներին, որոնք նպատակ էին հետապնդում Արցախը բռնակցել Ադրբեջանին, եվրոպական դիվանագիտության դիրքորոշմանը[37] և այլն:

Հետազոտողներից շատերը որոշակիորեն անդրադարձել են նախապատերազմական իրավիճակին: Այդ իրադարձություններից գլխավորներն էին. խորհրդա-թուրքական համաձայնությունը, վրաց-թուրքական պայմանավորվածությունը, թուրք-ադրբեջանական գործակցությունը:

Նշված երեք շրջափուլերի պատմագիտական միտքը, ներկայացնելով նախապատերազմյան իրավիճակը, թեև իր առջև հստակ խնդիր չի դրել դրանք վերլուծել որպես պատերազմին նախորդող իրադարձություններ, սակայն որոշակիորեն նպաստել է դրանք վերլուծելու և ընկալելու որպես պատերազմական իրավիճակի իրողություն: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, ի տարբերություն խորհրդահայ հեղինակների, հնարավորություն է ունեցել առավել անկաշկանդ գնահատել Հայաստանի առաջին հանրապետության ժամանակաշրջանի իրադարձությունները:

Վերոհիշյալ խմբերի հեղինակները պատերազմական իրադարձու-թյունների նկարագրությանը մեծ կարևորություն չեն տվել՝ հիմականում կենտրոնանալով պատերազմի պատճառներին, հետևանքներին, մեղավորներ փնտրելուն: Նրանք ըստ ամենայնի անդրադարձել են պատերազմի սկսման օրվա, Կարսի անկման, պարտության պատճառների, Ալեքսանդրապոլի պայմանագրի գնահատականներին:

Պատերազմում պարտության պատճառների շարքում Վահե Արծրունին նշում է հայկական բանակի համեստ թվականակը և ժողովրդի հոգեբանական վիճակը:

---

[37] Махмурян Г., Шуши 1919-1920 гг. в документах госдепартамента США и Национального архива Армении, «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում», Շուշի, 2010, էջ 68-69; она же, Трагедия города Шуши 23–26 марта 1920 г. в отечественной и зарубежной историографии и геноцид его армянского населения, Историко-филологический журнал, 2021, № 2, с. 113-115; она же, Тема уничтожения города Шуши и геноцида его армянского населения (23–26 марта 1920 г.), Материалы международной научно-практической конференции, Ереван, 2021, с. 423-424.

Ժամանակի հեղինակներից Հ. Տեր-Հակոբյանը, Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը, Ա. Ջամալյանը իրավացիորեն նշել են պատերազմի նախօրյակին թուրք-ադրբեջանական համաձայնությամբ Հայաստանը տնտեսապես թուլացնելու փաստը: Հ. Քաջազնունին, Ս. Վրացյանը, Իրազեկը Կարսի անկման, նահանջի և պատերազմում վերջնական պարտության պատճառների մասին նշում են բանակը բարոյալքված ու հոգնած լինելը, անպատիժ կողոպուտի առկայությունը զինվորական կազմի միասնականության բացակայությունը, մասնագետ զորավարների պակասը, սպայական կազմի փոքրաթիվ լինելը, բանակի ռազմական ոգու, կարգապահության ցածր մակարդակը:

Պարտության պատճառների շարքում առաջնային է համարվել հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը: Պատերազմի ընթացքում Հայաստանի ներսում բոլշևիկների հրահրած տրամադրություններին անդրադարձել է ժամանակի մամուլը՝ նրանց գործունեությունը համարելով երկրի մարտունակությունը թուլացնող պատճառներից մեկը:

Պատմաբանների, քաղաքական, ռազմական ու հոգևոր գործիչների քննարկման առարկա է դարձել հատկապես 1920 թ. հոկտեմբերի 30-ի Կարսի անկումն ու պատերազմի արդյունքներն ամփոփող դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Պատմաբաններն ու հասարակական-քաղաքական գործիչները միահամուռ են Կարսի անկման գնահատականի, Ալեքսանդրապոլի պայմանագրի հակահայկական բնույթի, Թուրքիայի կողմից պանթուրքիզմի ծրագիրը հետևողականորեն իրականացնելու հարցերում: Նրանք իրավացիորեն շեշտադրել են, որ թուրքական արշավանքը վտանգ էր ներկայացնում ամբողջ Անդրկովկասի համար:

Վերոնշյալ հետազոտողները մատնանշում են, որ քեմալական կառավարությունն իր առջև խնդիր էր դրել՝ ոչնչացնել Հայաստանը: ՀՀ արտաքին քաղաքականության մեջ գերիշխել է արևմտյան կողմնորոշումը, որի դիմաց եվրոպական պետությունները և ԱՄՆ-ը Հայաստանին զենք և պարենային օգնություն են տրամադրել, ինչը եղել է սահմանափակ և անբավարար խորհրդաքեմալական գործակցության դեմ:

Մյուս կողմից բացահայտվում են ՀՀ կառավարության քաղաքական ու վարչական բնույթի սխալներն ու բացթողումները, Կարսի ամրոցի հնարավորությունների անտեսումը ՀՀ քաղաքական-կուսակցական իշխանությունների կողմից և բազմաթիվ այլ հանգամանքներ, որոնք հանգեցրել են պատերազմի:

Ինչպես 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, այնպես էլ Ալեքսանդրապոլի պայմանագրի վերաբերյալ պատմաբանների մոտեցումների նորովի քննությունն ու վերլուծությունը, դրանց տրվող գիտական ու քաղաքական գնահատականները հնարավորություն են տալիս ներկա քաղաքական փոփոխվող աշխարհակարգը ճիշտ հասկանալու, անցյալի բացթողումները վերլուծելու և պատմությունից անհրաժեշտ դասեր քաղելու համար:

Անկախությունից հետո խնդրո առարկա հարցերին անդրադարձել են Ե. Սարգսյանը, Է. Զոհրաբյանը[38], Լ. Խուրշուդյանը[39], Գ. Գալոյանը[40], Կ. Խաչատրյանը, Գ. Մախմուրյանը, Ա. Հակոբյանը, Ա. Ներսիսյանը, Վ. Վիրաբյանը և այլք:

---

[38] Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:

[39] Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թ., Երևան, 2002:

[40] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. Մովսեսյան Ն., 1920 թ. հայ-վրացական հարաբերությունների լուսաբանումը ժամանակի հայ պատմագրության մեջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, 2021, N 2(24), էջ 150-157:

2. Մովսեսյան Ն., Կարսի անկման գնահատականը ժամանակի հայ պատմագրության մեջ (1920 թ. հոկտեմբեր), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, 2021, N 3(24), էջ 123-130:

3. Մովսեսյան Ն., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ,, 2023, N 2 (26), էջ 62-74:

4. Movsesyan N. M., Manifestations of pan-turkism in the Turkish-Armenian war of 1920 (According to the Assessment of the Armenian historiography of the time), «Բանբեր հայագիտության», 2023, N 2 (32), էջ 110-119:

5. Մովսեսյան Ն., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկզբնավորման անդրադարձը խորհրդահայ պատմագիտության մեջ, «Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերական, 2023, N 2(27), էջ 129-141:

6. Մովսեսյան Ն., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի լուսաբանումը սփյուռքահայ պատմագիտության մեջ, Գիտական հոդվածների ժողովածու «Գավառի պետական համալսարան», 2024, N 17, էջ 231-239:

7. Մովսեսյան Ն., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկզբնավորման հարցերը սփյուռքահայ պատմագիտության մեջ, Գիտական հոդվածների ժողովածու «Գավառի պետական համալսարան», 2025, N 20, էջ 131-139:

МОВСЕСЯН НАРИНЕ МНАЦАКАНОВНА

ОСВЕЩЕНИЕ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 ГОДА В МЕМУАРАХ И В ОЦЕНКАХ АРМЯНСКИХ ИСТОРИКОВ ДИАСПОРЫ И СОВЕТСКОГО ПЕРИОДА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение»

Защита диссертации состоится 24-го февраля 2026 г. в 1400 на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Цель диссертации – на основе исследования архивных документов, опубликованных источников, мемуаров и монографий всесторонне проанализировать историографию турецко-армянской войны 1920 г.

В исследовании рассматриваются важнейшие вопросы, связанные с данной актуальной проблемой, которые имеют научное и практическое, политическое значение. Изучены причины, предпосылки, особенности дипломатической подготовки и последствия ряда спорных вопросов турецко-армянской войны 1920 г.

Диссертация состоит из введения, трёх глав с параграфами, заключения, списка использованных источников и литературы.

Во **введении** дана общая характеристика историографии спюрка и работ специалистов советского периода; представлена характеристика диссертации, ее актуальность, цели и задачи исследования, научная новизна, практическая значимость и методология. Основным методом были многофакторный анализ событий, с последующим сравнением и синтезом исторических и историографических данных. В изложении был применен способом микроистории.

В **первой главе** диссертации: **«Оценка армянской исторической науки событий, предшествовавших турецко-армянской войне 1920 года»,** описываются события мая-сентября 1920 г., разворачивавшиеся накануне войны, как они освещены и оцениваются армянскими авторами того времени, а также представителями армянской диаспоры и историками советского периода. В частности, рассматриваются вопросы только что сформированной и еще не полностью окрепшей системы управления Первой Республики Армения, отношения с соседними странами – особенно с Грузией, Азербайджаном, Советской Россией и Турцией, дипломатические подходы западных держав – в первую очередь Великобритании и отчасти США и Франции, влияние Севрского договора на обострения армяно-кемалистских отношений. Особая роль отведена армяно-русским военно-политическим отношениям, тяжелой социально-экономической ситуации в республике и другим важнейшим проблемам.

Вторая глава: «Армянская историческая мысль о начале турецко-армянской

войны 1920 года и ходе военных событий» состоит из трех параграфов. В данной главе рассматриваются 10, 20, 23 и 28 сентября как введенные в историческую науку даты начало турецко-армянской войны 1920 г. При важности начала реальных боевых действий 10 сентября и официального приказа М. Кемаля 20 сентября, соискатель считает главным 23 сентября 1920 г. как день крупномасштабного турецкого наступления по всему фронту. Ход военных действий рассмотрен в общем временном контексте, а также в оценках специалистов армянской диаспоры и советской армянской исторической мысли.

Представлены подходы и обсуждения, связанные с вопросом начала войны. Освещен ход военных действий. Особое внимание уделено оценке падения Карса как решающего и переломного события, которое имело определяющее значение для исхода войны.

Третья глава: «Оценка завершающей фазы турецко-армянской войны 1920 года армянскими историками», включает три параграфа. В главе представлены оценки завершения турецко-армянской войны 1920 года и острая полемика по этому вопросу между авторами-современниками событий, представителями различных партий спюрка и советских специалистов. Сильное влияние идеологии просматривается во всех работах научно-исторического характера. Только падение Карса 30 октября 1920 г. оценивается всеми авторами как общенациональная трагедия. Особенное внимание уделяется Александропольскому договору и русско-турецко-армянским отношениям, сформировавшимся в результате успешной кемалистской агрессии.

В **заключении** подведены основные итоги диссертации. Отмечено развитие исторической науки, изучавшей и оценивавшей ход войны, уменьшение идеологического фактора в пользу научной объективности. Это делает работу актуальной, позволяет сравнивать социально-политические условия и военные действия разных исторических периодов, использовать результаты данной диссертации в практических, современных целях.

MOVSESYAN NARINE MNATSAKAN

COVERAGE OF THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 IN THE MEMOIRS AND ASSESSMENTS BY THE ARMENIAN HISTORIANS OF THE DIASPORA AND OF THE SOVIET PERIOD

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "Historiography, Source Studies" 07.00.05.

The Defense of the Dissertation will be held on Februrary 24, 2026, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The purpose the thesis is to analyze comprehensively the historiography of the Turkish-Armenian war, 1920, based on the study of archival documents, published sources, memoirs and monographs.

The study examines the most important issues related to this pressing problem, which have scientific, practical and political meaning. It scrutinizes the causes, preconditions, specifics of diplomatic preparation, in common with consequences of a number of controversial matters in the Turkish-Armenian war of 1920.

The Thesis consists of introduction, three chapters with paragraphs, a conclusion and a list of references and literature.

The Introduction provides a general overview of the historiography of the Diaspora and the works of the specialists of the Soviet period; it presents the characteristics of the Thesis, its relevance, the goals and objectives of the research, its scientific novelty, practical value and methodology. The primary method was a multifactorial analysis of events, followed by comparison and synthesis of historical data and historiography. Microhistory was applied as a main tool of the presentation.

The first chapter of the Thesis, titled **"Assessment of the Armenian Historical Sciences on the Events Preceding the Turkish-Armenian War of 1920,"** describes the events of May-September 1920, enfolded on the eve of the war, as they are covered and assessed by the Armenian authors of that time, as well as by representatives of the Armenian Diaspora and by historians of the Soviet period.

The issues of the fresh and not yet fully consolidated system of Government of the First Republic of Armenia, relations with neighboring country – especially with Georgia, Azerbaijan, Soviet Russia and Turkey, diplomatic approaches of Western Powers – primarily of the Great Britain, and partly of the USA and France, influence of the Treaty of Sevres on the aggravation of the Armenian-Kemalist relations are considered in particular. A special role is given afforded to Armenian-Russian military-political relations, to the grave socio-economic situation in the

Republic, and to the other most important matters, as well.

The second chapter, **"Armenian Historical Thought on the Beginning of the Turkish-Armenian War of 1920 and the Course of Military Events"** is divided into three paragraphs. The chapter examines September 10, 20, 23 and 28 as dates introduced into the historical science to mark the beginning of the Turkish-Armenian war of 1920. Assuming the importance of the commence of the real military operation on September 10 and the official order by M. Kemal, given on September 20, the applicant considers the day of September 23, 1920, to be the main date of a large-scale Turkish offensive along the entire front. The course of the military operations is inspected in the general temporal context, as well as in the assessments of experts from the Armenian Diaspora in common with the Soviet Armenian historical thought.

Approaches and discussions regarding the question of the launching the war are presented, too. The development of the military operations is elucidated. Particular attention is paid to the assessment of the fall of Kars as a decisive and crucial event that critically impacted the outcome of the war.

The third chapter, titled **"The Final Phase of the Turkish-Armenian War of 1920 in the Assessment of Armenian Historians,"** includes three paragraphs. The chapter presents valuations of the conclusion of the Turkish-Armenian war, 1920, and the heated debate on this problem among authors who were contemporary to the events, as well as by the representatives of various Diaspora parties and Soviet professionals. The strong influence of ideology can be traced in all works of the scientific historical nature. Only the fall of Kars on October 30, 1920, is weighed by all authors as a national tragedy. The Treaty of Alexandropol and the Russian-Turkish-Armenian relations, which were formed as a result of successive Kemalist aggression, had received particular attention.

The conclusion brings a summary of the main results, achieved in the Thesis. The development of the historical science, which studied and assessed the course of the war, and the reduction of the ideology factor in favor scholar objectivity were stresses. This makes the work relevant and allows to compare the socio-political conditions and military actions of different historical periods and use the results of this Thesis for practical, contemporary purposes.